

ՑՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ ՂԱԼԱԹԻՈՅ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱԿՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Կազմեց՝ Հ. ԱՐՍԷՆ Ղ. ՂԱԶԻԿԵԱՆ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1968, ք. 1-3, էջ 37)

Թիւ 26

Մաշտոց (քրքեայ), ՌՃԻԲ (1673)

Միջակ դերքով, նոտրգիր, կարմիրով խառն (տուն գլուխ, ալեխուխ, եւն.), շարականներուն վրայ խաղերով, սովորական զարդադրերով, կոկիկ գրչութեամբ. թուղթը հաստ եւ լաւ պահուած:

Սկիզբը ստացողի յիշատակարանը կայ: Կազմը հաստատուն տախտակ եւ կաշի, բայց կաշին լաւ կազմուած, վրան խառն չով եւ շուրջը գեղեցիկ զարդերով, նոյն ինքն կաշին վրայ աշխատուած: Թ(իւ) 18 ծաշոց դրքի նման, միեւնոյն զարդերն են որ հոս եւս կան: Յարդ մը չի կրնար ունենալ իբր ձեռագիր:

Թիւ 26բ

Աւետարան քրքեայ, Ի քու(իմ) ՋԳ (1454)

Միջակ դերքով, բոլորգիր, գրչութիւնը ճարտար. չորս աւետարանիչներու նկարները կան համապատասխան խորաններով եւ լուսանցքի զարդերով, շատ ճաշակաւոր եւ ընտիր ոճով. սկիզբն ալ կան կանոններու տախտակները: Ունի մասնաւոր յիշատակարան, ուր կ'ըսուի, ի մէջ այլոց.

«Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուա-

կանութեանս Հայոց ի ՋԳ (1454) ամին ձեռամբ յոգնամեղ եւ տարտամ ոգւոյ գրչի Մինաս էրիցոյ», եւն.:

Սկիզբն ու վերջը կան երկերկու թուղթեր՝ իբր պահպանակ՝ երկաթադիր աւետարաններու, շատ հին ձեռագիրներ՝ հոյակապ գրչութեամբ: Ընդհանուր վիճակը լաւ է, բայց խոնավութիւնը երթալով կը նուազեցնէ յարդը: Պատուական գործ:

Ծանօթութիւն Յ. Քիւրտեանի - Ձեռագրիս յիշատակարանը հրատարակուած է աւելի ամբողջութեամբ, նախ՝ «Հանդէս Ամսօրեայ»-ի մէջ, 1903, էջ 341. եւ անկէ Ամսօրեայ»-ի մէջ, 1903, էջ 341. եւ անկէ Ա. Ս. Խաչիկեանի «ԺԵ. դարի հայեալ Լ. Ս. Խաչիկեանի «ԺԵ. դարի հայեալ» (1451 թէն ձեռագրերի յիշատակարաններ» (1451-1480) գործին մէջ, թիւ 60, կամ էջ 47-48, ուրկէ առնելով աւելորդ չեմ նկատեր հոս հրատարակել:

«Գրեցաւ ի թվականութեանս Հայոց ՋԳ (1454) ամին, ձեռամբ (յոգնամեղ եւ տարտամ ոգւոյ) գրչի Մինաս էրիցոյն, ի նահանգիս Տիւրքիոյ, ի վանք Խուռնայ-լիւոյ, ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչի եւ սուրբ Աստուածածնի... ի յառաջնորդութեան եւ ի վերադիտողութեան տէր Յովհաննիսի, եւ ի հայրապետութեան տեառն Կարապետի, եւ ի միւս հայրապետութեան Արեւելեան կողմանց՝ տեառն Գրիգորի»:

Թիւ 27

Փոքր Մաշտոց քրքեայ,
Ի քու(իմ) ՌՃԻ (1568)

Փոքրագիր, բոլորգիր, անվարժ գրչութիւն: Շատ խեղճ վիճակի մէջ՝ ըստ ամենայնի, որդնակեր, խոնավութենէ փճացած, դունատուած: Վերջին էջին մէջ ստացողի յիշատակարանը կայ, գրչութեան ի թուին Ռ. ու ժի (1568): Բուն գրչութեան այդ թուականը տալ չես յօժարիր՝ գրին խեղճութենէն ու ձեւէն. սակայն այդ դարու գործ է:

Կողքը կաշեպատ տախտակ է, բայց չէ կրցեր պաշտպանել որ ներքին էջերը խոնավութենէ կարենային պահպանուիլ: Անարժէք գործ:

Թիւ 28

Գանձարան քրքեայ,
Ի քու(իմ) ՌԿԲ (1613)

Փոքրագիր, բոլորգիր, քայքայուած վիճակի մէջ: Մէջը երկու գրչութիւն կայ. առաջին գրչի կոկիկ եւ ճաշակաւոր է: Սկիզբը կը պակսի շատ բան: Կազմէն իսկ յայտնի է որ շատ էջեր վերցուած են, եւ հին գրչութիւն է: Յիշատակարան մ'ունի, ուր կ'ըսուի, «... յանկ հանեալ հիւծելոյս յանցանաւք ետ զօրութիւն անպիտան Դուկաս իրիցոս զտաղերն գրեցի, եւ կապեցի զս(ուր)ք գիրքս: Ի թվականիս Հայոց ՌԿԲ (1613)», որմէ կը հետեւի թէ ինք գներ, նորոգեր է ՌԿԲ (1613)ին. ըսել է՝ ձեռագիրը աւելի հին է, եւ այս յիշատակարանին գրչութիւնը տարբեր է նախնիքացէն: Իսկ զ«տաղերն գրեցի» ըսելն ալ ճիշտ է, որովհետեւ այդ յիշատակարանին վերջը կը սկսին տաղերը խաղերով, նոյն Դուկաս երէցէն գրուած: Խեղճ վիճակ:

Թիւ 29

Տաղարան քրքեայ, քուական չունի

Միջակ դերքով, բոլորգիր սեւցած եւ քայքայուած՝ եկեղեցւոյ մէջ յաճախ գոր-

ծածուելէն: Յիշատակարան չունի: Տեղ տեղ՝ ինչպէս սկիզբն ալ՝ կան զարդեր, բայց բոլորովին դունաթափած: Գրչութիւնը եթէ ոչ այնքան ընտիր՝ բայց արհամարելի ալ չէ: Ձեռագրին ընդհանուր վիճակը դժուարեցիչ է: Կազմելու կապելու կարօտ է: Վերջը պահպանակ ունի՝ մագաղաթեայ երկաթադիր էջ մը: Ժի. դարու գործ է հաւանօրէն:

Թիւ 30

Յայտնաւորք քրքեայ, անքուական

Գրչին է Պօղոս Երէց:

Առաջին էջին պատկերը կը պակսի. կը սկսի ցանկով, խորանաձեւ կամարը կայ յարակից լուսանցքի զարդով: Ծաշակաւոր են, գեղեցիկ գրչութեամբ: Յայտնութեան գլխուն սովորական նկարը, Աստուածածին՝ Յիսուս մանուկը գիւղը, եւ երեք մոզերը ծնրադիր: Աստուածածնի գէմը քերուած: Դիմացի էջը առաջինին նման՝ խորանաձեւ յարակից զարդով, նման ճաշակով: Կայ դարձեալ Յարութեան պատկերը, քիչ մը աւելուած, դիմացի գեղեցիկ էջով: Լուսանցքին վերայ տեղ տեղ սուրբերու նկարներ կան:

Մեծագիր, կաշեպատ տախտակեայ, մաքուր գրչութիւն, զարդերը խիստ ճաշակաւոր, դոյները եւ ոսկին անվթար. նկարները քիչ շատ աւելուած՝ տխար ձեւերէ: Յիշատակարան չունի, միայն տեղ տեղ կը յիշուի ստացողի անունը, «Մահտեսի Վարդէհուրին», եւն. եւն... եւ «բազմամեղ գրչի Պօղոս Երիցոյն»:

Եկեղեցւոյն մէջ շատ գործածուելէն՝ քիչ շատ խաթար վիճակ ունի. պէտք է կազմել եւ հաստատել եւ խնամքով պահել: Ժի. դարու գործ է հաւանօրէն: Պատուական գործ:

(Հոս գիրը կը փոխուի եւ դարձեալ Հայր Արսէն Ղազիկեանի գրչին - Ծան. Յ. Ք.):

Թիւ 31

Յայտնաւորք քղթեայ
ի քուին ՌՃԿԷ (1718)

Գրիչ՝ Արուսթին քահանայ:

Յիշատակարանը կ'ըսէ. «Արդ գրեցաւ սա ձեռամբ մեղապարտ անարժան եւ անպիտան փցուն գրչին Արուսթին քահանային յանցաւորի: Ի թվականութեանս Հայոց ՌՃԿԷ (1718), ի քաղաքն Կեսարիոյ եւ ի գեօղն որ կոչի Եւգառա»:

Հսկայ ձեռագիր, հաստամետ եւ ամրակառոյց, կաշեպատ տախտակեայ, հաստ եւ ընտիր թղթի վրայ: Սկիզբը կը պակսի ցանկը, անոր տեղ պարապ թուրթեր են ձգուած: Նկար ալ չայ, կայ խորանագարդ էջը, յարակից դարդով՝ ճաշակաւոր եւ ընտիր գրչի գործ. միայն խորանին մէջի նկարը անզգամ եւ անպարիշտ ձեռքէ մը հանուած եւ տեղը ճերմակ թուղթ կպցուած: Սոյն առաջին էջին ներքեւը գրուած է. «Աւրհնեա Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ եւ աշուղեա զգործս ձեռաց ծառայիս քո անիմաստ Պօղոս դպրիս եւ հան աւարտ զըսկըսեալս իմ»:

Կ'երեւի ծաղկողն է սոյն Պօղոսը: Ընթացքին մէջ կան լուսանցադարձեր եւ տեղ տեղ նկարներ ալ՝ լուսանցքին վերայ, ճաշակաւոր եւ համաչափ դժագործութեամբ: Պատուական եւ մեծղի գործ: Ընդհանուր վիճակը լաւ է, միակը գուցէ, որ լաւ է մնացած:

Ծանօթութիւն Յ. Քիւրտեանի. - Յիշատակարանս հրատարակած է Բարգէն Ծ. Վ. Կիւլէսէրեան իր «Կոյնոս Յովհաննէս Պատրիարք» (1904, Վիեննա) գործին մէջ, էջ 123-124, եւ անկէ առնելով Արշակ Արայոյանէն իր «Պատմութիւն Հայ Կեսարիոյ» Բ. հատորին մէջ, էջ 1885-6, ուր կը ծանօթագրէ «պահուած Կ. Պոլսոյ Աղդ. Մատենադարանը»: Ասիկա ճիշտ չէ, քանի որ նախ Հայր Ղազիկեան Ղալաթիոյ Ս. Լուսաւորչի ձեռագրաց շարքին տեսած՝ է, յետոյ Բարգէն Սըր-

բաղան Կիւլէսէրեան՝ Աղդ. Մատենադարանին իր հրատարակեալ (Անթիլիաս, 1961) ձեռագրաց ցուցակին մէջ այս Յայտնաւորքը չէ նշանակած կամ ցուցակադրած: Հոս կ'արտադրեմ յիշատակարանը, աւելի ընդարձակ:

«Արդ գրեցաւ սա ձեռամբ մեղապարտ, անարժան եւ անպիտան եւ փցուն գրչիս Արուսթին քահանային յանցաւորի, ի թվականութեան Հայոց ՌՃԿԷ (1718) ի քաղաքն Կեսարիոյ եւ ի գեօղն որ կոչի Եւգառա, ի դուռն Սրբոյն Ստեփանոսի Նախավկային եւ Սրբոյն Սարգսի Զօրավարին եւ սրբոյն Մերկերիոսի զինաւորին եւ Սրբոյն Գէորգեա եւ Թէոդորոսի դօրավարացն, ի հայրապետութեան Տեառն Աստուածատուր կաթողիկոսի եւ յեպիսկոպոսութեան այսմ նահանգիս եւ առաջնորդ Սահակ վարդապետ»:

«Արդ աղաչեմ զամենայն դասս քահանայից, որք հանդիպիք այսմ լուսադարձ մատենիս, յիշեալիք ի մաքրափայլ յաղթած ձեր զվերողրեալսն. Կեսարացի եւ դաւառն Մանճիսոնցի մահտեսի Պօղոսն եւ որդեգիր մահտեսի Սարգիսն եւ զամենայն աղգայինսն: Որ ստացաւ զսուրբ գիրքս ի հալալ յընչից իւրոց եւ ետ յիշատակ՝ Բիւզանդիոյ եւ իւր դէմն Ղալաթայ՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցւոյն...»:

«Դարձեալ աղաչեմ զամենեւեան յիշել ի մաքրափայլ յաղթած ձեր՝ զմեղաւոր հող եւ գրիչս եւ զծնողսն իմ զՊարսամ քահանայն եւ զԵւա իրիցկինն, եւ զկողակիցն իմ եւ զԿուլլի երէցկինն եւ զուսուցիչն իմ զԱստուածատուր քահանայն եւ զսորա Եւա իրիցկինն, որ բազում աշխատութեամբ սնուցին եւ ուսուցին զիս...»:

«Այլ եւ զօրինակիս շնորհողն, վարդապետ կամ երէց, որ զօրինակն շնորհեցին եւ ստացան իւրեանց բարի անուն եւ բարի յիշատակ»:

«Քահանայք և Սարկաւազունք, առանց դատառակի զգիրքս մի՛ պահէք եւ ի մօմէ պատրաստ բռնեցէք եւ զկարգալն անփոյթ մի՛ առնէք, զի գրեալ է թէ՛ տօնասէր չէ զրկած ի պսակաց մարտիրոսաց,

այլ է հաղորդ նոցին փառաց առանց դանից եւ տանջանաց...»:

Թիւ 32

Յայտնաւորք քղթեայ
ի քուին Ռ.ՀԴ (1725?)

Ունի ընդարձակ յիշատակարան՝ ուր կ'ըսուի. «Գրեցաւ եւ աւարտեցաւ սրբոց պատմութիւնս որ կոչի այսմաւորք, թվականիս Ռ.ՀԴ, ի քաղաքն Ստամպուլ. ընդ հովանեաւ սուրբ Նիկողայոսու. ի դպրատանն վարպետիս, որ մեզ զգիրս ուսոյց որ եւ ասաց զայս...»:

Ռ.Հ.ն վերջի գիրը անորոշ է. եթէ ձ համարուի՝ 1725 թվականը կ'ելլէ: Ատկէ դատ, յիշատակարանին մէջ իմաստակոտանաւոր մը կայ, ըստ որում՝ Յակոբ անուան մէջ փակուած է եղեր թուականը. (Յ-300, Ա-1, Կ-60, Ո-600, Բ-2, 963 հաւասար 1514): Գուցէ բուն թուականը չըլլայ աս, բայց ինչ որ ալ ըլլայ, քիչ մը առաջ՝ կամ քիչ մը վերջ՝ այդ թուականներու գործ է:

Սկիզբը պակասաւոր է, պատկերազարդ էջը, այսինքն Լուսաւորչի սովորական նկարն ու դիմացի խորանաձեւ զարդը եւ յարակից լուսանցադարձը՝ մազաղաթի վրայ ըլլալուն՝ հաներ տարեր են անզգամօրէն: Յայտնութեան պատկերը տեղըն է, դիմացի էջով՝ մազաղաթի վերայ: Գեղեցիկ ու ճաշակաւոր գործ՝ երկուքն ալ, բայց պատկերազարդ էջը խաթարուած ու վնասուած է. կայ նաեւ Յարութեան պատկերը, նոյնպէս մազաղաթի վրայ, եւ նոյն նման վնասուած: Իսկ դիմացի էջին մէջ կայ պատկեր մը՝ Յիսուսի նկարը, քովն ունենալով երկու հրեշտակներ, շատ գեղեցիկ, եւ յիշելի՝ շնորհակալ ըլլալու ենք որ առաջին էջի մազաղաթները առկող տանող անպարիշտ ձեռքը՝ չէ տարած այս էջերը եւս, կամ այդ նկարը չէ մկրտած տարած: Թէ՛ այս խորանաձեւ էջը, եւ թէ՛ յարակից զարդը տեղ տեղ վնասուած են խուժուղուժ ձեռքէ: Լուսանցադարձերը՝ բազմա-

մաթիւ, ճաշակաւոր եւ վարպետ ոճով: Ցանկը վերջն է դրուած:

Ձեռագրին ընդհանուր վիճակը լաւ է, թուղթը հաստ եւ տեղ տեղ սեւցած՝ գործածութենէն: Ընտիր գործ:

Թիւ 33

Յայտնաւորք քղթեայ
ի քուին ՌՃԻԳ (1674)

Մեծագիր, հսկայ գործ, հաստ թուղթ, հաստատուն կազմ ու կողք: Սկիզբը կայ ցանկը, զլիսագրերը՝ կարմիրով, ինչպէս նաեւ զլիսակարգութիւնները: Յետոյ կը սկսի Յայտնաւորքը: Ընտիր մազաղաթի վրայ: Ս. Լուսաւորչի պատկերը զգեստաւորեալ, առջեւը Տրդատ թագաւորը՝ խողին կրթնած, ծնրադիր, ձեռուն ծալած, մինչ Լուսաւորչի կ'օրհնէ զինքը: Յաջորդ էջն ալ ընտիր մազաղաթ, խորանաձեւ գեղեցիկ զարդերով, ինչպէս նաեւ տող մը ամբողջ գեղեցիկ թռչնագրերով. լուսանցքին վրայ վերէն վար գեղեցիկ զարդ մը, թէ՛ գոյները եւ թէ՛ ոսկինքը լաւ պահուած են, միայն տեղ տեղ քիչ մը աւրուած: Յաջորդ էջերը թղթեայ են, տարբեր գրչութեամբ: Մազաղաթեայ էջերուն գիրը քիչ մ'աւելի փոքր է՝ բայց շատ ընտիր: Իւրաքանչիւր վկայաբանութեան նախատառերը թռչնադիր՝ լուսանցքին վրայ յարակից գեղեցիկ զարդով մը, եւ կամ նոյն սուրբին նկարով, բայց տեղ տեղ աւրուած, մանաւանդ գլուխները, անշուշտ տխմար դիտումով:

Երկրորդ մասը կը սկսի նոյնպէս երկու մազաղաթ թերթերով: Առաջին թերթին առաջին էջը պարապ է, ինչպէս էր նաեւ ձեռագրին սկիզբը. երկրորդ էջին վրայ մոդերու երկրպագութիւնը. բայց թէ՛ Յիսուս մանկան եւ թէ՛ մոդերուն դէմքերը անզգամօրէն աւրուած՝ աղճատուած, տղէտ եւ անպարիշտ ձեռքերէ: Դիմացի էջը նոյնպէս մազաղաթ՝ գեղեցիկ զարդերով, խորանաձեւ, թռչնագրերը նոյնպէս գեղեցիկ, լուսանցքի զարդն ալ նոյն ճա-

չակով: Այս մաղաղաթեայ երկու էջերուն դիրերն ալ նոյն են սկիզբի մաղաղաթեայ էջերուն դիրերուն հետ. կ'երեւի այդ էջերը աւելի ճարտար դրչի են դրել տուեր. թէեւ միւս դրչին ալ ճարտար է, առանց դուցէ առաջինին նրբութիւնն ունենալու:

Երրորդ մասը Զատիկէն կը սկսի. կայ սկիզբը Յիսուսի Յարութեան պատկերը, բոլորովին փճացած, դիմացը նոյն ճաշակով եւ գեղեցիկ դրչութեամբ խորանածեւ նկարը՝ թռչնադրերով եւ լուսանցքի զարդովը. առաջին դրչին դործն է. հոս, սակայն, մաղաղաթի վրայ չէ, այլ թուղթի:

Ձեռագիրը թէեւ հաստատուն կողք ունի, կաշեպատ՝ ամուր տախտակեայ, բայց քիչ շատ քայքայուած է, եւ պէտք ունի նորոգութեան: Մասնաւոր պահպանակ չունի:

Ի վերջն՝ ունի կանոնաւոր Յիշատակարան, ուր՝ ի մէջ այլոց՝ կ'ըսուի. «... Արդ յանկ ելեալ աւարտեցաւ սուրբ մատենա ուր կոչի այսմաւուր: Ի թվական նութեանս Հայոց ՌՃԻԳ (1674), ի մայրաքաղաքն Կոստանդինուպոլիս... ձեռամբ... Ակնցի Ղազար իրիցու»:

Թիւ 34

Յայսմաւուրքի քղբեայ, անթուական

Թիւ 30 Յայսմաւուրքին յարեւմանը՝ ըստ ամենայնի: Գրիչը՝ նոյն Պօղոս երէցն է, որ տեղ տեղ կը յիշատակէ ինքզինքը՝ գիրքն ստացողներուն անուան հետ: Կարգա՝ այդ Յայսմաւուրքի մասին գրուածը: Նոյնպէս Ժէ. դարու գործ է, թէեւ մասնաւոր յիշատակարան չունի եւ յիշատակուած չէ թուականը: Ասոր ըսկիզբը կայ Տրդատի պատկերը՝ անբաժան խողը հետը ունենալով: Նոյն ձեռագրին բոլոր նկարագրութիւնները կը յարմարին ճիշտ ասոր ալ. միեւնոյն ոճով գրուած, նոյն ճարտարութեամբ ու ճաշակով նրկարուած՝ թէ՛ զարդերն ու թէ՛ լուսանցքի նկարները, որոնք տեղ տեղ կտրատ-

ուած հանուած, տեղ տեղ ալ աւրուած՝ աղճատուած են անդամ եւ տխմար ձեռքերէ: Ընտիր Գործ:

Թիւ 35

Աւետարան մագաղաթեայ
ի քուին ՈՀԲ (1223)

Ներկայ ձեռագիրներուն մէջ՝ ամէնէն հոյակապը, թէ՛ իրր հնագոյն անոնց մէջ, եւ թէ՛ իրր ամէնէն զմայլելին:

Փոքրագիր, մեծարուեստ, մանր բոլորգիր, բաղմաթիւ նկարներով: Սկիզբը 12 տախտակները. մէջն ալ՝ բացի աւետարանիչներուն պատկերներէն՝ ուրիշ բաղմաթիւ պատկերներ եւս. ամէնքն ալ դարուն ճաշակով ու ճարտար դրչութեամբը:

Յիշատակարանը կ'ըսէ. «Արդ եղև զրաւ գրութեան սորա ի թուականիս Հայոց ի ՈՀԲ (1223) ընդ հովանեաւ սուրբ տաճարիս Տիրամաւրն, յանապատիս Թաղվորի վանք, ընդ հովանեաւ Մամես-գիրոյ...»:

Կողքը երկու կողմն ալ ոսկեղօծ՝ արծաթապատ նկարներով: Կողքն ալ զմայլելի է: Ձեռագիրը կը հանդէս թիթեղեայ տուրի մէջ...:

Իրր պահպանակ՝ ունի երկերկու թերթ երկաթագիր աւետարանի էջեր, գեղեցիկ դրչութեամբ:

Սքանչելի գործ:

Կը պակսի Թիւ 36

Թիւ 37

Աւետարան քղբեայ, քուական չունի

Ամենափոքր գիրքով, գրպանի, գիրը նոսր է. գրութիւնը՝ վարժ. նկարներ ու զարդեր կան ամէնուրեք:

Յիշատակարան չունի. Ժէ. դարու է, անչուշտ: Կողքը՝ արծաթապատ. սկիզբը կայ խաչելութեան պատկերը, չորս ան-

կիւնները խորհրդաւոր կենդանիներով: Նոյնպէս միւս կողմը. մէջտեղը խաչ, եւն. եւն.:

Կը պակսի Թիւ 38

Թիւ 39

Խորհրդատետր քղբեայ
ի քուին ՌՃԻԵ (1676)

Միջակ գիրքով, երկիջեան, շատ գործածուած, որով եւ քիչ մը քայքայուած: էջերը սեւցած, մոմոտած. զարդ, եւն. կը պակսի. նոյն խաչ սկիզբը չկայ, պարապ է թողուած, սպասելով ճարտար դրչի մը՝ որ չէ հասեր: Ասոր տեղ հասեր են որդերը եւ իրենց զարդերը ցուցադրած՝ հոս ու հոն: Խոնավութիւնն ալ սկսած իր աւերը առաջ կը տանի:

Յիշատակարանը կ'ըսէ. «Գրեցաւ խորհրդատետրս ի թվականիս Հայոց ՌՃԻԵ (1676) ամի, ամսեանն յունիսի ԻԸ (28): Ձեռամբ... Զաքարեա երիցու...»:

Թիւ 40

Խորհրդատետր քղբեայ, անթուական

Միջակ գիրքով, բոլորգիր, գեղեցիկ դրչութեամբ, ընտիր զարդերով եւ թրոչնադրերով: Ձեռագիրը, սակայն, շատ գործածուելէն՝ բոլորովին խեղճ վիճակի մէջ: Ժէ. դարու գործ է. հաւանաբար թիւ 33 Յայսմաւուրքի ճարտար դրչին գործը կ'երեւի: Թուղթը բարակ ըլլալուն՝ երկու էջ իրարու փակցուցած եւ այնպէս գրուած է: Բարերար ձեռքերու օգնութեան կը կարօտի, որպէսզի կարենայ դեռ շատ տարիներ ապրիլ:

Կը պակսի Թիւ 41-53

Թիւ 54

Տօնացոյց քղբեայ, անթուական

Փոքրագիր, նոսր գրով, ճաշակաւոր դրչի գործ: Ի վերջն կան ժամամուտներ,

Թաղաւոր յաւիտեաններ, Գանձեր, եւ այլն...: Շատ կոկիկ դրչութիւն, բայց խոնավութեան եւն... փճացած: Յիշատակարան չունի:

Կը պակսի Թիւ 55-60

Թիւ 61

Աւետարան ի քուին ՌՃԻԱ (1672)

Փոքրագիր, երկիջեան, բոլորգիր, նրկարներ կան մէջը՝ լուսանցքներուն վրայ, ըստ նիւթոյ Աւետարաններուն: Սովորական դրչութիւն. նոյնպէս զարդերն ու նկարները: Թուղթը՝ գեղնաչորթ: Յիշատակարանը կ'ըսէ.

«... գրեցաւ յաշխարհիս թուրքաց եւ ի յերկիր Կ. Պոլիս: Ի թվարեութեան ասքանագեան տոմարին ՌՃԻԱ (1672), ձեռամբ Պէկլէր Գալբիս Դիվրիկցի...» եւն.:

Կաղմը՝ հաստատուն, կաշեպատ տախտակ կողքով, մաքուր պահուած, ըստ թուականին:

Անթիւ

Ժամագիրք ի քուին ՌՃԻ (1655)

Մեծագիր, երկիջեան, բոլորգիր, բաժրակեայ թանձր թուղթ, մաքուր դրչութիւն, զարդերով եւ նկարներով:

Սկիզբը կայ «Հրաժարիմք»ը, եւ ամբողջ Տօնացոյցը: Հաստատուն կաղմ, բայց շատ գործածուելէն՝ մաշած հինցած: Գրուած է ի Կ. Պոլիս, «Ի թուականիս Հայոց ՌՃԻ (1655) ձեռամբ... Մարկոս ծառայիս»: Յետոյ կայ ուրիշ յիշատակարան՝ ուրիշ գրչէ:

Վրան թիւ չկայ:

Անթիւ

Աւետարան Խղաքերից
ի քուին ՌՄԿ (1811)

Մեծագիր, չքեղ դրչութիւն, իւղաբերից չորս աւետարանները: Յիշատակա-

րանը կ'ըսէ. «Յիշատակ է սոյն պատկեր-
րաւոր եւ մի կողմն արծաթապատ չքե-
ղազարդ իւղաբերից սուրբ Աւետարանս՝
Ղալաթիա սուրբ Լուսաւորիչ եկեղեց-
ւոյն»:

Ամիրաներու ընծայ մըն է, որմէ կըր-
նայ հետեւցուիլ թէ ինչ գեղեցիկ ըլլալու
են պատկեր եւ արծաթ՝ որ կը յիշուին
յիշատակարանին մէջ: Բայց ափսո՛ս որ
ձեռագիրը մերկ է մնացեր այդ չքեղ դար-
դերէն եւ մնացեր է տկուր, ողորմելի
կողքի մը մէջ:

* * *

Հոս կ'աւարտի Ղալաթիոյ Ս. Լուսա-
ւորիչ եկեղեցւոյն ձեռագրաց ցուցակը,
պատրաստուած Հ. Արսէն Ղազիկեանէ եւ
իր մէկ անծանօթ օգնականէն, քանի որ
յարգելի եւ վաստակաւոր Հօր զրչութե-
նէն տարբեր զրչութեամբ ցուցակազըր-
ուած են քանի մը ձեռագիրներ (թիւ 23բ-
30):

Յուցակին վերջը՝ կազմէն անջատուած
թերթի մը վրայ, որ գետեղած եմ տե-
տրակին մէջ, իբր էջ 23, կայ ձեռագրի
մը ցուցակազրութիւնը՝ դարձեալ Հ. Ա.
Ղազիկեանի գրչէն, զոր հոս կ'արտա-
զրեմ:

* * *

Աւելցնել՝ Ղալաթիոյ Ազգ. Մատենա-
դարանի Հայ. Ձեռագրաց Յուցակին

Թիւ ...

Մատենան որ կոչի

Միւգաթարադի բուպիի տայիբէ

Շարադրեալ

յեռուսփ էփէնտի գատէէ
եւ

Թարգմանեալ ի Գէորգ Պատուելոյն
ընդ հովանեալ Սուրբ Հրեշտակապետու
Եկեղեցւոյն որ ի Կոստանդնուպոլիս
Յամի Տեառն 1770

Ա. էջին վրայ Յիշատակարան՝

«Եւ ի նօթագիր օրինակէ գաղափարեալ

մեծաւ զգուշութեամբ ի Մեսրոփը շնոր-
հապալլ եւ հանճարաշատ Վարդապետէ
Կեսարացւոյ ի Պատրիարքարանն ամե-
նայն Հայոց ի Կոստանդնուպոլիս յամի
Տեառն 1810, Փետրվար 9»:

«Եւ ի յայս գաղափարէ վերստին գա-
ղափարեցաւ ի Յակովբայ բժշկէս Թօմայ-
եան Կոստանդնուպոլսեցոյ, ի 25 Ապրիլի,
1810 յամի Տեառն, ի Կոստանդնուպո-
լիս»:

Միւգաթարադէ յետոյ (վախճան մա-
տենիս յամի Տեառն 1810, յԱպրիլ 27) կը
սկսի.

«Հարկաւոր տեղեկութիւն՝ ի վերայ
Ժամուց եւ Ժամանակաց, որ յաւելեալ ե-
ղեւ ի Յակոբայ բժշկէ Թօմայեան Կոս-
տանդնուպոլսեցոյ» (այն է ծագումը,
տարուան եղանակները, օրուան Ժամերը,
անունները): Յետոյ, երկու էջ՝ բառա-
րան Մ(իւգաթարադ)ի մէջ զործածուած
պարսկերէն եւ արաբերէն բառերու:

* * *

(էջ 24ա. Հայր Արսէն Ղազիկեանէ)

Վերջաբան

Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն
ձեռագրաց սոյն համառօտ ցուցակը վեր-
ջացնելու եւ յանձնելու ատենը՝ ինծի
պարտք կը համարեմ պատուարժան խը-
նամակալութեան ուշադրութիւնը հրա-
ւիրել անոնց աւագելի վիճակին վրայ: Ա-
նոնք օդ, արեւ, լոյս, չորութիւն կ'աղա-
ղակեն. պէտք է տալ իրենց, պէտք է հա-
նել զանոնք խոնաւ, մզլոտ իրենց որջէն
ու տուփերէն: Որքան պիտի փափաքէի
որ ասոնք եւս արժանանային Պալաթու
Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն ձեռագիր-
ներուն բախտին՝ բարեբար ձեռքի մը հո-
վանիին տակ:

Կը յանձնարարեմ ի մասնաւորի զուր-
դուրալ թիւ 35 մագաղաթեայ աւետարա-
նին վրայ, որ հրաշալիք մըն է. նոյնպէս
թ. 17 ձաւոց Գիրքը, թիւ 17Բ. մագա-
ղաթեայ Աւետարանը, եւ գեռ ուրիշ շատ
ձեռագիրներ, մանաւանդ թէ ամէնքն ալ

պէտք է որ Ձեր մասնաւոր հոգածութեան
եւ համբոյրներուն առարկայ դառնան:
Անգղամ, անպարիշտ ձեռքեր շատ վնաս-
ներ են հասցուցած, այլ եւ այլ կերպե-
րով. պատկեր կտրատելով, տանելով,
զոյներուն աւերելը կամ չաւերելը փորձե-
լու համար՝ զանոնք աղճատելով, եւն.:

Ահա՛ քիչ օրեր վերջ՝ կը հաստատուի
Հայկական թանգարանը ի նորակերտեալ
Հայաստան, պէտք է որ հոն զետեղուին
անոնք՝ զմայլելի դրաքարաններու մէջ:

3 յուլիս 1920

ի Կ. Պոլիս

յՕրթագիւղ

Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ

Յ. Գ. Ձեռագիրները՝ որ կը պահուին,
այս օրերս չէ որ անհետացեր են, այլ ի
վաղուց անտի: Մաղթենք որ այսուհետեւ
զոնէ այլեւս պակասներ չըլլան եղածնե-
րուն մէջէն:

Հ. ԱՐՍԵՆ ՂԱԶԻԿԵԱՆ

3 յուլիս 1920

յՕրթագիւղ

Կ. Պոլսոյ

* * *

Այսպէս կ'աւարտի այս ցուցակը, որ
լոկ համառօտ գաղափար մը կու տայ Ղա-
լաթիոյ հին Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ
մէջ 1920ին դեռ գոյութիւն ունեցող ձե-
ռագիրներուն մասին: Ասկէ տասնեակ մը
տարիներ առաջ, ինքս ալ տեսայ եկեղեց-
ւոյն ձեռագիրները նա մանաւանդ թիւ 35
մագաղաթեայ Աւետարանը, զոր գունա-
ւոր լուսանկարեցի: Դժբախտաբար ձե-
ռագիրները դարձեալ տուփերու մէջ,
«գանձատան» մը մէջ փակուած էին: Ե-
կեղեցւոյն քանդումէն վերջ՝ ձեռագիր-
ները ինչ եղան, չեմ գիտեր: Կրնան Պա-
տրիարքարան փոխադրուած ըլլալ եւ ան-
կէ ալ Ղալաթիոյ նորակերտ Ս. Լուսա-
ւորիչը:

Հ. Արսէն Ղազիկեան Ղալաթիոյ Ս.
Լուսաւորիչ եկեղեցւոյ ձեռագիրներուն
թուահամարը կը հասցնէ 61, եւ սակայն

այդ 61 ձեռագիրները կորուստներ ունե-
ցած են «ի վաղուց անտի»: Ենթադրենք
որ թիւ 61ը վերջին համարով ձեռագիրն
էր այս ժողովածոյին, եւ անկէ վերջ ձե-
ռագիրներ չեն աւելցած, թէեւ չենք գի-
տեր որ ե՛րբ եւ ո՛վ թուահամար տուած
է այս ձեռագիրներուն: Արդ Հ. Ղազի-
կեան պակաս կը նշանակէ հետեւեալ թիւ
ունեցող ձեռագիրները. 1-3, 6-15, 19,
36, 38, 41-53 եւ 55-60, ընդամենը 35 ձե-
ռագիր: Նոյն ատեն կը տրուին երբեմն
տրուած թիւի մը գիմաց՝ 2, 3 ձեռագիր-
ներ, որպէս են թիւ 17բ, 18բ, 20բ, 21բ,
21գ, 22բ, 23բ, 23գ, 26բ եւ երկու ան-
թիւ ձեռագիրներ. ընդամենը 11 ձեռա-
գիրներ, որոնք կրնան պակասող թուահա-
մարով ձեռագիրներ եղած ըլլալ, եւ այս-
պէսով 61 ձեռագիրներէն 24 հատ պակ-
սած կարելի է նկատել. ասով 1920 Յու-
լիս 3ին Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկե-
ղեցին կը գտնուէին 37 հայերէն ձեռա-
գիրներ: Թէ ինչ ձեռագիրներ էին պակ-
սածները, բնական է՝ ի վիճակի չեմ ը-
սելու եւ միայն ցաւալի իրողութիւնն է
որ կ'արձանագրեմ:

Հոս հարց կը ծագի թէ ինչո՞ւ դեռ ե-
կեղեցիներու մէջ տարտղնուած կը մնան
հայերէն հին ձեռագիրներ, որոնք չեն
զործածուիր արարողութեանց ատեն,
ու շատ անգամ կը մնան անխնամ,
անկազմ, լքուած, մարդկային տգիտու-
թեան եւ նաեւ աւարատեղութեան եւ-
թակայ: Հարկաւոր է որ կեդրոնացուին
որոշ ապահով եկեղեցիներու եւ կամ վան-
քերու մէջ. օրինակ, Կ. Պոլսոյ ձեռագիր-
ները եկեղեցիներէն հաւաքելով՝ ապահով
պահուելու են Կ. Պոլսոյ մէջ, եկեղեցա-
կան կեդրոնի մը մէջ, հակառակ եւ հրա-
կողութեան տակ: Այլապէս, օր մը այլ-
եւս բան պիտի չմնայ մեր ձեռագրական
Ժառանգութենէն, որ տարտղնեալ է եկե-
ղեցիներու մէջ: Մեր եկեղեցական վերին
իշխանութիւնները այլեւս գիտակից՝ կը
յուսանք որ առաջին կ'առնեն նորանոր
փճացումներու կամ կողոպուտներու:

Յ. ԲԻԻՐՏԵԱՆ